Գյումրի համայնքի ղեկավար՝
Պարոն Վարդգես Սամսոնյանին
Վահե Սողոյանի լիազորված անձ,
«ՖՐԻԴ ՍՈՂՈՅԱՆԻ» Մշակութային Հիմնադրամի
Հոգաբարձուների Խորհրդի Նախագահ՝
Տիգրան Մանուկյանից
Բջջային հեռ. (+374) 99 790017

Հարգելի պարոն Սամսոնյան,

Համաձայն Ձեր 12.10.2023թ. գրության (ներկայացվում է կից նյութերում)՝ Ֆրիդ Սողոյանի ժառանգների կողմից «ՖՐԻԴ ՍՈՂՈՅԱՆԻ» մշակութային հիմնադրամի ստեղծման վերաբերյալ հայտնում ենք, որ.

ՀՀ Արդարադատության Նախարարության Իրավաբանական Անձանց Պետական Ռեգիստրի Պետական Միասնական Գրանցամատյանում 06.11.2023թ. գրանցվել է «ՖՐԻԴ ՍՈՂՈՅԱՆԻ» Մշակութային Հիմնադրամը (գրանցման համար 222.160.1350951):

«ՖՐԻԴ ՍՈՂՈՅԱՆԻ» Մշակութային Հիմնադրամը գտնվելու է Գյումրի համայնքում գործող «ՖՐԻԴ ՍՈՂՈՅԱՆԻ» հուշատուն-ցուցասրահի հասցեում՝ Գյումրի համայնք, Ս.Համբարձումյան փողոցի թիվ 35 շինություն:

Կից ֆայլով ներկայացվում է ՀՀ Արդարադատության Նախարարության Իրավաբանական Անձանց Պետական Ռեգիստրի Պետական Միասնական Գրանցամատյանից քաղվածքի լուսապատճեն:

Խնդրում ենք Ձեզ, գործող «ՖՐԻԴ ՍՈՂՈՅԱՆԻ» հուշատուն-ցուցասրահի՝ տրամադրված անհատույց և մշտական օգտագործման, Գյումրու Ս.Համբարձումյան փողոցի թիվ 35 հասցեի 332,75 (երեք հարյուր երեսուներկու ամբողջ յոթանասունհինգ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով շենքը և շենքի պահպանման ու սպասարկման համար զբաղեցված 0,0551642 (զրո ամբողջ հիսունմեկ հազար վեց հարյուր քառասուներկու միլիոներրորդական) հեկտար մակերեսով հողամասը (Գյումրի համայնքի ավագանու N 134-Ա առ 08.09.2020թ. և Գյումրի համայնքի ղեկավարի N 73-Ա առ 19.01.2022թ. որոշումներ) նույն պայմաններով (անհատույց և մշտական օգտագործման) ընդունված կարգի համաձայն տրամադրել Գյումրի համայնքի ավագանու և ղեկավարի համապատասխան որոշումներ՝ «ՖՐԻԴ ՍՈՂՈՅԱՆԻ» Մշակութային Հիմնադրամի գործունեությունը ապահովելու նպատակով:

Առդիր՝ էլ. ֆայլ:

Ֆրիդ Սողոյանի հուշատուն-ցուցասրահի
կազմակերպաիրավական հարցերով
Վ. Սողոյանի կողմից լիազորված անձ,
«ՖՐԻԴ ՍՈՂՈՅԱՆԻ» Մշակութային Հիմնադրամի
Հոգաբարձուների Խորհրդի Նախագահ՝ Տ. Մանուկյան

17.01.2024թ.

(կազմված է 20.09.2023թ. և
բաղկացած է 12 թերթից)

Տպագրված է ընդամենը 3 օրինակ
ՕՐԻՆԱԿ 3

*ՀԱՍՏԱՏՎԱԾ Է*

«ՖՐԻԴ ՍՈՂՈՅԱՆԻ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄ
հիմնադրելու մասին հիմնադիրների
20.09.2023թ. թիվ 1 որոշմամբ

Հիմնադրամի Գործադիր տնօրեն՝

Գոհար Մանուկյան________

*ԳՐԱՆՑՎԱԾ Է*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ
"06" 11 2023 թ.

գրանցման համար՝ 222.160.1350951

ՀՎՀՀ՝ 05560871

աշխատակից՝

# «ՖՐԻԴ ՍՈՂՈՅԱՆԻ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

## ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

2023թ.

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «ՖՐԻԴ ՍՈՂՈՅԱՆԻ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ-ը /այսուհետ՝ Հիմնադրամ/ Հայաստանի ժողովրդական նկարիչ, հայ քանդակագործ, ՀԽՍՀ վաստակավոր և ՌԴ ժողովրդական նկարիչ Ֆրիդրիխ /Ֆրիդ/ Մկրտչի Սողոյանի ժառանգների կողմից հիմնադրված կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված անդամություն չունեցող և շահույթ ստանալու նպատակ չհետապնդող ոչ առևտրային կազմակերպություն է, որը հետապնդում է մշակութային, կրթական, գիտական, բարեգործական և այլ հանրօգուտ նպատակներ:

1.2. Հիմնադրամը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի և «Հիմնադրամների մասին» ՀՀ Օրենքի /այսուհետ Օրենքի/ պահանջներին համապատասխան:

1.3. Իր գործունեության ընթացքում Հիմնադրամը ղեկավարվում է ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ միջազգային պայմանագրերով, օրենքներով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:

1.4. Հիմնադրամը գործում է օրինականության, կամավորության, ինքնակառավարման և հրապարակայնության սկզբունքներով:

1.5. Հիմնադրամի անվանումն է՝
հայերեն լրիվ՝ «ՖՐԻԴ ՍՈՂՈՅԱՆԻ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
անգլերեն լրիվ՝ CULTURAL FOUNDATION «FRID SOGOIAN»
ռուսերեն լրիվ՝ КУЛЬТУРНЫЙ ФОНД «ФРИДА СОГОЯНА»

1.6. Հիմնադրամի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, քաղաք Գյումրի, Ս. Համբարձումյան փողոց 35:

1.7. Հիմնադրամն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում, ինչպես նաև օտարերկյա պետություններում, այդ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

1.8. Հիմնադրամի գործունեության ժամկետը չի սահմանափակվում:

1.9. Հիմնադրամի Հիմնադիրներն են՝

- ՀՀ քաղաքացի Վահե Ֆրիդրիխի Սողոյան (ծնված 12.06.1970թ., անձնագիր AV0525695 տրված 17.11.2022թ. 099-ի կողմից, բնակության վայրի հասցե՝ ՀՀ ք. Երևան, Սունդուկյան փողոց 7 շենք, 64 բնակարան, էլ. փոստի հասցե՝ vage2008@yandex.ru).
- ՌԴ քաղաքացի Միքայել Ֆրիդրիխի Սողոյան (ծնված 10.10.1973թ., անձնագիր՝ 76 7597267 տրված 21.05.2022թ. ՆԳՆ 77116 կողմից, բնակության վայրի հասցե՝ ՀՀ ք. Երևան, Սունդուկյան փողոց 7 շենք, 64 բնակարան, էլ. փոստի հասցե՝ msogoian@yandex.com):

## 2. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

2.1. Հիմնադրամի նպատակներն են՝

- աջակցել «ՖՐԻԴ ՍՈՂՈՅԱՆԻ» հուշատուն-ցուցասրահի ստեղծմանն ու գործունեությանը և նպաստել քանդակագործի արվեստի ներկայացմանը ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ համաշխարհային հանրությանը,
- ապահովել Ֆրիդ Սողոյան քանդակագործի շահերը, այդ թվում՝ հեղինակային իրավունքների պաշտպանությունը,
- աջակցել համաշխարհային մշակույթի և արվեստի պահպանմանը և զարգացմանը:

## 3. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՏԵՍԱԿՆԵՐԸ

3.1 Հիմնադրամի գործունեության առարկան է՝

- մշակութային միջոցառումների /քննարկումներ, ցուցահանդեսներ, համերգներ, կինո/տեսա/ձայնավենների դիտումներ, մրցանակաբաշխություններ, հանդիսություններ և այլն/ կազմակերպումը,
- բարեգործական միջոցառումների կազմակերպումը և/կամ նման միջոցառումներին մասնակցությունը,
- համապատասխան տեղեկատվական ցանցի ստեղծումը,
- Հիմնադրամին առնչվող կրթական ծրագրերի իրականացումը կամ մասնակցությունը,
- Հիմնադրամին առնչվող հարցերում միջազգային համագործակցության զարգացմանը նպաստումը,
- արտերկրի համապատասխան հաստատությունների, գիտական և հասարակական կազմակերպությունների հետ կապերի հաստատումը, նրանց հետ համատեղ ծրագրերի իրականացումը կամ մասնակցությունը,
- մշակութային նոր օջախների ստեղծումը, նախկինների վերականգնմանն օժանդակությունը,
- տուրիզմի զարգացմանն ուղղված միջոցառումներին աջակցությունը,
- Հիմնադրամին առնչվող հարցերի շուրջ տեղական, հանրապետական և միջազգային ծրագրերի, սեմինարների, համաժողովների, ասուլիսների անցկացումը, ցուցահանդեսների կազմակերպումը կամ մասնակցությունը,

3.2 Հիմնադրամը կարող է իրականացնել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակներ՝

- ցուցասրահների, թանգարանների կազմակերպում,
- ուսումնական կենտրոնների ստեղծում, դասընթացների, դասախոսությունների կազմակերպում, անցկացում,
- քանդակագործության արվեստանոցների ստեղծում,
- մշակութային ներքին և արտաքին տուրիզմի կազմակերպում, էքսկուրսիաների կազմակերպում դեպի մշակութային հայտնի և նորաստեղծ օջախներ, արվեստի քարոզչություն,
- քանդակների, նկարների արտադրություն և վաճառք,
- հուշանվերների և դրանց համապատասխան ատրիբուտների արտադրություն և վաճառք,
- տեղեկատվական, խորհրդատվական ծառայություն,
- ցուցահանդես վաճառքների կազմակերպում, իրականացում,
- հրատարակչական գործունեություն և արտադրանքի իրացում:
- գրքերի, ալբոմների, ազդագրերի, հրավիրատոմսերի, բուկլետների տպագրումը:

3.3 Սույն կանոնադրության 2.1 կետում նշված նպատակների իրականացման համար և ըստ իր գործունեության բնույթի՝ Հիմնադրամն իրավունք ունի ստեղծել տնտեսական ընկերություններ կամ լինել դրանց մասնակիցը:

3.4 Եթե վերոնշված գործունեության որևէ տեսակով զբաղվելն, օրենքով սահմանված կարգով, ենթակա է լիցենզավորման, ապա Հիմնադրամը կարող է զբաղվել դրանով միայն համապատասխան լիազոր մարմնի կողմից տրված լիցենզիայի առկայության դեպքում՝ լիցենզիա ստանալու պահից և/կամ դրանում նշված ժամկետում:

## 4. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՐԱՎՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԽՄԲԵՐԸ

4.1. Հիմնադրամի իրավունակությունը ծագում է նրա պետական գրանցման պահից և դադարում է լուծարման ավարտի պահից:

4.2. Հիմնադրամն իրավաբանական անձի կարգավիճակ է ձեռք բերում պետական գրանցման պահից:

4.3. Հիմնադրամն ունի իրավաբանական անձի համար սահմանված բոլոր իրավունքները և կրում է համապատասխան պարտականություններ:

4.4. Հիմնադրամն ունի սույն կանոնադրությամբ նախատեսված գործունեության նպատակներին համապատասխան քաղաքացիական իրավունքներ և կրում է այդ գործունեության հետ կապված պարտականություններ: Հիմնադրամն իր քաղաքացիական իրավունքները, ներառյալ դրանց պաշտպանության իրավունքը, իրականացնում է իր հայեցողությամբ: Հիմնադրամի կողմից իր այդ իրավունքների իրականացումից հրաժարվելը չի հանգեցնում այդ իրավունքների դադարմանը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

4.5. Հիմնադրամը՝

- ունի հիմնադիրների գույքից առանձնացված գույք, որը հաշվառվում է ինքնուրույն հաշվեկշռում,
- սեփականատերն է իրեն տրամադրված գույքի և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով,
- կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ,
- կարող է դատարանում հանդես գալ որպես հայցվոր, պատասխանող կամ երրորդ անձ,
- կարող է ստանալ դրամաշնորհներ և նվիրատվություն,
- ունի իր անվանումը պարունակող կլոր կնիք: Վերջինս կարող է պարունակել նաև Հիմնադրամի անվանումն այլ լեզուներով, ինչպես նաև խորհրդանիշը,
- կարող է ունենալ իր անվանումը պարունակող դրոշմներ և ձևաթղթեր, ինչպես նաև անհատականացնող այլ միջոցներ,
- կարող է ունենալ խորհրդանիշ,
- կարող է բացել բանկային հաշիվներ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների բանկերում՝ Հայաստանի Հանրապետության դրամով և/կամ արտարժույթով:

4.6. Հիմնադրամն իրավունք ունի՝

- ՀՀ օրենքով չարգելված բոլոր ձևերով ձեռք բերել գույք, այդ թվում՝ արժեթղթեր, տիրապետել, օգտագործել և տնօրինել դրանք ու դրանցից ստացված եկամուտը,
- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել պայմանագրեր և ձեռք բերել իրավունքներ ու կրել պարտավորություններ,
- պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից օրենքով սահմանված կարգով ստանալ տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են իր կանոնադրական նպատակներն իրականացնելու համար,
- իրականացնել օրենքով չարգելված այլ գործունեություն,
- հիմնադրել մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցներ,
- ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ /մասնաճյուղեր, ներկայացուցչություններ/ և հիմնարկներ, այդ թվում՝ տուն-թանգարաններ, հուշատուն-ցուցասրահներ,
- ստեղծել տնտեսական ընկերություններ կամ լինել նրանց մասնակիցը,
- վերակազմակերպվել,
- կատարել փոփոխություններ և լրացումներ իր կանոնադրությունում,

- անարգել տարածել տեղեկություններ իր գործունեության մասին,
- Հիմնադրամը, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և իր կանոնադրությանը համապատասխան, կարող է անդամակցել միջազգային և օտարերկրյա ոչ պետական կազմակերպություններին,
- Հիմնադրամն ունի ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ իրավունքներ:

4.7. Հիմնադրամը կարող է ունենալ հնարավոր և փաստացի շահառուներ:

4.7.1. Հիմնադրամի շահառուներն են՝

- Մշակույթի բնագավառում գործունեություն իրականացնող ֆիզիկական և իրավաբանական անձինք:
- Ֆրիդ Սողոյանի մշակութային ժառանգությունն ուսումնասիրելու և այն հանրությանը արժանավայել կերպով ներկայացնելու աշխատանքներին լծված ֆիզիկական և իրավաբանական անձինք:

4.8. Հիմնադրամի իրավունքները կարող են սահմանափակվել միայն օրենքով նախատեսված դեպքերում և օրենքով սահմանված կարգով:

4.9. Հիմնադրամը քաղաքացիական իրավունքները ձեռք է բերում ու իրականացնում իր կամքով և ի շահ իրեն: Հիմնադրամն ազատ է պայմանագրի հիման վրա սահմանելու իր իրավունքները և պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման:

4.10. Հիմնադրամն ունի ՀՀ օրենսդրությամբ չարգելված բոլոր եղանակներով իր քաղաքացիական իրավունքների պաշտպանության իրավունք:

## 5. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ, ՆՐԱ ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Հիմնադիրները պատասխանատու չեն Հիմնադրամի պարտավորությունների, իսկ Հիմնադրամը՝ Հիմնադիրների պարտավորությունների համար:

5.2. Հիմնադրամն իր պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքով:

5.3. Հիմնադրամը պարտավոր է՝

- գործել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, Օրենքին և այլ օրենքներին ու իրավական ակտերին, ինչպես նաև Հիմնադրամի կանոնադրությանը համապատասխան,
- օրենքով նախատեսված դեպքերում և կարգով տեղեկատվություն ու հաշվետվություններ ներկայացնել պետական մարմիններին,
- օրենքով սահմանված կարգով վարել գործավարություն և հաշվապահական հաշվառում,
- իրականացնել Օրենքով և այլ օրենքներով սահմանված այլ պարտականություններ:

5.4. Յուրաքանչյուր տարի հաշվետու տարվան հաջորդող հուլիսի 1-ից ոչ ուշ Հիմնադրամը հիմնադրամների կողմից հրապարակվող հաշվետվությունների համար նախատեսված համակարգում պարտավոր է հրապարակել՝

1) հաշվետվություն իր գործունեության մասին, որը պետք է պարունակի տեղեկություններ իրականացված ծրագրերի, ֆինանսավորման աղբյուրների, ֆինանսական տարում օգտագործված դրամական միջոցների ընդհանուր չափի և դրանցում կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափի, հիմնադրի, հոգաբարձուների խորհրդի անդամների, գործադիր տնօրենի անուններն ու ազգանունները, եթե նրանք օգտվել են հիմնադրամի միջոցներից և ծառայություններից հաշվետու տարվա ընթացքում, ինչպես նաև հիմնադրամի աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը.

2) հաշվապահական հաշվառումը կարգավորող օրենսդրության համաձայն պատրաստված ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների

ամվա վերջի դրությամբ հիմնադրամի ակտիվների հաշվեկշռային արժեքը գերազանցում է 10 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը:

## 6. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՒՅՔԸ, ԴՐԱ ՏՆՕՐԻՆՄԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

6.1. Հիմնադրամը՝ որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով:

6.2. Հիմնադրամի սկզբնական միջոցներն են հիմնադիրների կողմից ստեղծման պահին փոխանցված նյութական և/կամ ֆինանսական միջոցները:

6.3 Հիմնադիրների կողմից Հիմնադրամին հանձնված գույքը Հիմնադրամի սեփականությունն է: Հիմնադրամն այդ գույքն օգտագործում, կառավարում, տիրապետում և տնօրինում է իր հայեցողությամբ՝ իր կանոնադրությամբ սահմանված նպատակներով:

6.4 Հիմնադրամը, որպես սեփականություն, կարող է ունենալ անշարժ և շարժական գույք, արժեթղթեր, օգտագործումից ստացված արդյունքներ, արտոնագրեր և մտավոր սեփականություն, դրամական միջոցներ՝ ՀՀ դրամով, արտարժույթով:

6.5 Հիմնադրամի գույքի՝ ներառյալ ֆինանսական միջոցների, գոյացման աղբյուրներ կարող են լինել՝

- Հիմնադիրների ներդրումները,
- ֆիզիկական և իրավաբանական անձանց, այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացիների ու իրավաբանական անձանց, միջազգային կազմակերպությունների նվիրատվությունները և նվիրաբերությունները,
- դրամական մուտքերը պետական բյուջեից,
- դրամաշնորհները,
- Հիմնադրամի և իր ստեղծած կամ իր մասնակցությամբ տնտեսական ընկերությունների ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցները,
- հանգանակությունները՝ միջոցներ, որոնք ստացվում են դրանց կուտակմանն ուղղված գործունեությունից /մշակութային, զվարճալի և այլ միջոցառումների միջոցով գումարների հայթայթում/,
- Հայաստանի Հանրապետության օրենքներով չարգելված այլ աղբյուրներ:

6.6. Հիմնադրամի սեփականությունը չի կարող օգտագործվել ի շահ իր հիմնադիրների, Հիմնադրամի մարմինների անդամների, ինչպես նաև Հիմնադրամի աշխատողների, բացառությամբ աշխատողների աշխատավարձի և հիմնադրամի մարմինների անդամների պարտականությունների կատարմամբ պայմանավորված՝ փոխհատուցման ենթակա ծախսերի, ինչպես նաև այն դեպքերի, երբ Հիմնադրամի հիմնադիրները, Հիմնադրամի մարմինների անդամները, ինչպես նաև Հիմնադրամի աշխատողները հանդիսանում են կանոնադրությամբ նախատեսված շահառուներ:

## 7. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

7.1. Հիմնադրամի կառավարման մարմիններն են՝ Հոգաբարձուների խորհուրդը և Գործադիր տնօրենը:

7.2. Հիմնադրամի կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմինը Հոգաբարձուների խորհուրդն է /այսուհետ նաև Խորհուրդ/:

7.3. Հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի անդամ կարող են լինել 18 տարին լրացած գործունակ ֆիզիկական անձինք, այդ թվում՝ հիմնադիրները:

7.3.1. Հիմնադրամի Հոգաբարձուների խորհուրդը բաղկացած է 3 /երեք/ անդամից:

7.4. Խորհրդի նախագահին ընտրում են Խորհրդի անդամները խորհրդի անդամների կազմից՝ իրենց ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

7.5. Հոգաբարձուների խորհրդի աշխատանքներին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել Հոգաբարձուների խորհրդի պատվավոր անդամները: Հոգաբարձուների խորհրդի պատվավոր անդամի կոչում շնորհում է Հոգաբարձուների խորհուրդը՝ հաշվի առնելով Հիմնադրամի գործունեության բնագավառում տվյալ անձի ներդրումները, կանոնադրությամբ սահմանված դեպքերում և կարգով:

7.6. Խորհրդի անդամները չեն կարող լինել Հիմնադրամի այլ մարմնի անդամ:

7.7. Հոգաբարձուների խորհուրդը գործում է իր կողմից հաստատված կանոնակարգի համաձայն:

7.8. Խորհրդի անդամներն իրենց պարտականությունները կատարում են առանց վարձատրության՝ հասարակական կարգով, նրանք կարող են փոխհատուցում ստանալ իրենց այն ծախսերի համար, որոնք կապված են Խորհրդի անդամի պարտականությունների կատարման հետ: Սույն կետով նախատեսված փոխհատուցումների վճարման կարգը սահմանում է Խորհուրդը:

7.9. Խորհրդի անդամների լիազորությունների ժամկետը 5 /հինգ/ տարի է:

7.10. Հիմնադրամի Խորհրդի առաջին կազմը ձևավորվում է Հիմնադրամի հիմնադիրների միաձայն որոշմամբ:
Օրենքով սահմանված դեպքերում Հիմնադրամի Խորհրդի անդամի լիազորությունը դադարելու դեպքում նրա փոխարեն նոր անդամ նշանակվում է Հիմնադրամի Խորհրդի որոշմամբ՝ Խորհրդի մնացած անդամների ձայների պարզ մեծամասնությամբ՝ ոչ ուշ քան Խորհրդի անդամի թափուր տեղ առաջանալու մասին տնօրենի ծանուցումն ստանալու օրվանից հետո՝ 30 օրվա ընթացքում: Սահմանված ժամկետում Հիմնադրամի Խորհրդի անդամների կողմից նոր անդամ չնշանակելու դեպքում նոր անդամը նշանակվում է հիմնադիրների կողմից 30 օրյա ժամկետում:
Խորհրդի բոլոր անդամների լիազորությունները դադարելու դեպքում, Խորհրդի հետագա կազմը ձևավորվում է Հիմնադրամի հիմնադիրների միաձայն որոշմամբ:
Հիմնադրամի Խորհրդի անդամի թափուր տեղ առաջանալու մասին տեղեկացված լինելու օրվանից ոչ ուշ, քան 10 օրվա ընթացքում Հիմնադրամի տնօրենը տեղեկացնում է հիմնադրին, Հիմնադրամի մարմիններին:

7.11. Խորհրդի անդամի լիազորությունները դադարում են՝
- Խորհրդի նախագահին արված գրավոր դիմումի հիման վրա,
- նրա կողմից իր պարտականությունները պատշաճ չկատարելու դեպքում՝ Խորհրդի մնացած անդամների ձայների առնվազն 3/4-ով,
- լիազորությունների ժամկետի ավարտման դեպքում,
- դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու դեպքում,
- նրա մահվան դեպքում,
- Օրենքով նախատեսված այլ դեպքերում:

7.12. Խորհրդի անդամներն իրավունք ունեն՝
- առաջարկություններ ներկայացնելու Խորհրդի նիստերի օրակարգի և քննարկվող հարցերի վերաբերյալ,
- նախապատրաստելու և Խորհրդի քննարկմանը ներկայացնելու հարցեր, առաջարկություններ և որոշումների նախագծեր,
- ստանալու տեղեկություններ Հիմնադրամի գործունեությանը վերաբերող ցանկացած հարցի վերաբերյալ,
- ստանալու իրենց պարտականությունների կատարմամբ պայմանավորված ծախսերի փոխհատուցում:

7.13. Խորհրդի անդամները պարտավոր են՝
- մասնակցել Խորհրդի նիստերին,
- իրենց պարտականությունների կատարման ընթացքում գործել՝ ելնելով Հիմնադրամի շահերից,

14. Խորհրդի իրավասությանն են պատկանում՝

1) Հիմնադրամի ռազմավարական ծրագրի /ծրագրերի/ հաստատումը,
2) Հիմնադրամի կողմից իրականացվող /այդ թվում՝ անձամբ/ ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը,
3) Հիմնադրամի տարեկան բյուջեի և դրա փոփոխությունների, տարեկան ֆինանսական հաշվետվությունների և գործունեության տարեկան հաշվետվությունների հաստատումը,
4) Հիմնադրամի գույքի տնօրինման կարգի հաստատումը,
5) Հիմնադրամի վերակազմակերպման մասին որոշման ընդունումը,
6) Հիմնադրամի լուծարման հարցով դատարան դիմելու մասին որոշման ընդունումը,
7) Հիմնադրամի լուծարման հանձնաժողովի /լուծարողի/ նշանակումը, լուծարման կարգի ու ժամկետների սահմանումը, լուծարման միջանկյալ հաշվեկշռի հաստատումը, լուծարման հաշվեկշռի հաստատումը,
8) Հիմնադրամի խորհրդի անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին որոշումների ընդունումը,
9) Խորհրդի նախագահի, գործադիր տնօրենի և կանոնադրությամբ սահմանված այլ մարմինների ընտրության և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարման մասին որոշումների ընդունումը,
10) իր որոշումների կատարման ընթացքի վերահսկումը,
11) սույն կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու, կանոնադրության փոփոխություն, նոր խմբագրությամբ կանոնադրություն հաստատելու մասին որոշումների ընդունումը,
12) տնտեսական ընկերությունների ստեղծման կամ դրանցում մասնակցության, ինչպես նաև առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների ստեղծման և դրանց կանոնադրությունների հաստատման մասին որոշումների ընդունումը,
13) Խորհրդի նիստերին խորհրդատվական ձայնի իրավունքով մասնակցելու իրավունք ունեցող Գործադիր տնօրենի հաշվետվությունների լսումը՝ յուրաքանչյուր տարի մեկ անգամ,
14) Հիմնադրամի աուդիտն իրականացնող անձի ընտրությունը,
15) Հիմնադրամի ներքին վարչակազմակերպական կառուցվածքի և դրանց աշխատակարգերի հաստատումը,
16) Հիմնադրամի ներքին աշխատանքային կանոնակարգերի և հաստիքացուցակի հաստատումը,
17) Գործադիր տնօրենի կողմից սույն կանոնադրության 7.21 կետում նշված գործարքներից որևէ մեկն անհրաժեշտաբար իրականացնելու համար գրավոր համաձայնություն տալը,
18) Խորհրդի պատվավոր անդամի կոչում շնորհելու վերաբերյալ որոշման կայացումը,
19) Հիմնադրամի ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումը,
20) Օրենքով, սույն կանոնադրությամբ, ինչպես նաև Հիմնադրամի այլ մարմիններին չվերապահված այլ լիազորությունների իրականացումը:

7.15. Խորհրդի բացառիկ իրավասությունը հանդիսացող հարցերը չեն կարող փոխանցվել Հիմնադրամի այլ մարմինների:

7.16. Խորհուրդը վերահսկողություն է իրականացնում Հիմնադրամի գույքի նպատակային օգտագործման, ինչպես նաև Հիմնադրամի Գործադիր տնօրենի գործունեության նկատմամբ:

7.17. Խորհրդի գործունեության ընդհանուր ընթացակարգը հետևյալն է՝

7.17.1. Հոգաբարձուների խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով: Հոգաբարձուների խորհրդի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է հոգաբարձուների խորհրդի անդամների կեսից ավելին: Քվեարկության ժամանակ

խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայն: Հոգաբարձուների խորհրդի
որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող անդամների ձայների
մեծամասնությամբ:
Հոգաբարձուների խորհրդի նախագահի ընտրության և ազատման, հիմնադրամի
գործադիր տնօրենի ընտրության և պաշտոնից ազատման, ինչպես նաև հիմնադրամի
անվանման փոփոխության, լուծարման և կանոնադրության փոփոխության կամ նոր
խմբագրությամբ կանոնադրության հաստատման մասին որոշումներն ընդունվում են
հոգաբարձուների խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:
Հիմնադրամի վերակազմակերպման մասին որոշումներն ընդունում է հոգաբարձուների
խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների որակյալ (2/3) մեծամասնությամբ:
17.2. Հոգաբարձուների խորհրդի նիստերը գումարվում են ոչ պակաս, քան տարին մեկ
անգամ` հոգաբարձուների խորհրդի նախագահի կողմից:
Հոգաբարձուների խորհրդի նիստերը կարող են հրավիրվել նաև հոգաբարձուների
խորհրդի անդամների 1/3-ի պահանջով` հոգաբարձուների խորհրդի նախագահի
կողմից` համապատասխան պահանջը ներկայացնելուց 30 օրվա ընթացքում:
Հոգաբարձուների խորհրդի նիստերը կարող են անցկացվել էլեկտրոնային փոստի կամ
կապի այլ միջոցների կիրառմամբ, ինչպես նաև հարցման կարգով:
7.17.3. Եթե նշված ժամկետում հոգաբարձուների խորհրդի նախագահը նիստ չի հրավիրում,
ապա նիստ կարող են հրավիրել նման պահանջ ներկայացրած անձինք:
7.17.4 Խորհրդի նիստերն արձանագրվում են: Արձանագրությունը կազմվում է նիստի
ավարտից 5 օրվա ընթացքում` առնվազն երկու օրինակից: Արձանագրության
բնօրինակը պահպանվում է Հիմնադրամի գտնվելու վայրում:

7.18. Խորհրդի նախագահը

- կազմակերպում է Խորհրդի աշխատանքները, Օրենքով նախատեսված դեպքերում
կարող է կազմավորել Խորհրդի ժամանակավոր հանձնախմբեր,
- գումարում է Խորհրդի նիստերը և նախագահում է դրանք,
- կազմակերպում է նիստերի արձանագրության վարումը,
- Խորհրդի քննարկմանն է ներկայացնում Խորհրդի անդամների լիազորությունների
դադարեցման մասին որոշման նախագիծ` Օրենքով նախատեսված դեպքերում:

Խորհրդի նախագահի բացակայության դեպքում նրա պարտականությունները Խորհրդի
որոշմամբ կատարում է Խորհրդի անդամներից մեկը:

7.19. Հիմնադրամի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Գործադիր
տնօրենը: Գործադիր տնօրենի իրավասությանն են պատկանում Հիմնադրամի ընթացիկ
գործունեության կառավարման բոլոր հարցերը: Գործադիր տնօրենը կազմակերպում է
հոգաբարձուների խորհրդի որոշումների կատարումը:
Գործադիր տնօրենին ընտրում և պաշտոնից ազատում է հոգաբարձուների խորհուրդը:
Գործադիր տնօրենի իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են
Օրենքով, Հիմնադրամի կանոնադրությամբ և նրա հետ կնքված պայմանագրով:
Հիմնադրամի անունից պայմանագիրը ստորագրում է հոգաբարձուների խորհրդի
նախագահը կամ հոգաբարձուների խորհրդի լիազորած այլ անձ:

7.20. Գործադիր տնօրենը

- ներկայացնում է Հիմնադրամը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա
պետություններում,
- տնօրինում է Հիմնադրամի գույքը, այդ թվում` ֆինանսական միջոցները, գործարքներ
է կնքում Հիմնադրամի անունից,
- առանց լիազորագրի գործում է Հիմնադրամի անունից և տալիս է լիազորագրեր,
- սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում աշխատանքային,
- բանկերում բացում է հիմնադրամի հաշվարկային (այդ թվում` արտարժութային) և
այլ հաշիվներ,

- Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Հիմնադրամի աշխատանքային ներքին կանոնակարգը, առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների ու Հիմնադրամի կողմից հիմնադրվող տնտեսական ընկերությունների կանոնադրություններն ու աշխատակարգերը, Հիմնադրամի վարչակազմակերպչական կառուցվածքն ու հաստիքացուցակը,
- իր իրավասությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ, վերահսկում է դրանց կատարումը,
- սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում է հիմնադրամի աշխատողներին, այդ թվում՝ հիմնադրամի առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների ղեկավարներին ու աշխատողներին,
- կատարում է աշխատանքի բաշխում աշխատողների միջև, ինչպես նաև աշխատողների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ,
- իրականացնում է սույն կանոնադրությունից բխող, սակայն Խորհրդի բացառիկ իրավասությունը չհանդիսացող այլ լիազորություններ:

7.21. Գործադիր տնօրենն առանց Խորհրդի գրավոր համաձայնության իրավունք չունի՝
- վաճառել, նվիրել, գրավ դնել, վարձով տալ, կամ այլ կերպ օտարել կամ զիջել Հիմնադրամին սեփականության կամ օգտագործման իրավունքով պատկանող գույքը և դրա նկատմամբ սեփականության իրավունքը,
- կնքել գույքի ձեռք բերման կամ օտարման պայմանագրեր, կատարել գործարքներ, որոնց գումարային ամբողջական արժեքը գերազանցում է 100000 /մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամ գումարը,
- վերցնել վարկեր, փոխառություններ, ինչպես նաև վարկ ստանալու նպատակով ֆիզիկական կամ իրավաբանական այլ անձանց տրամադրել երաշխավորություններ Հիմնադրամի անունից:

7.22. Գործադիր տնօրենն անձնական գույքային պատասխանատվություն է կրում դիտավորությամբ կամ անփութությամբ իր սխալների հետևանքով Հիմնադրամին պատճառած վնասի համար:

## 8. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ, ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԸ

8.1. Խորհրդի որոշմամբ անկախ աուդիտորը նվազագույնը տարին մեկ անգամ կիրականացնի Հիմնադրամի ֆինանսական գործունեության աուդիտը /հերթական աուդիտ/:

8.2. Հիմնադրամի Խորհրդի առնվազն երկու անդամի պահանջով կարող է անցկացնել արտահերթ աուդիտորական ստուգում:

8.3. Հիմնադրամի կողմից Օրենքի պահանջների կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Պետական եկամուտների կոմիտեն, իսկ օրենքով սահմանված դեպքերում՝ նաև այլ իրավասու պետական մարմինները՝ իրենց իրավասություններին և ստուգումների ու ուսումնասիրությունների՝ օրենքով նախատեսված ընթացակարգերին համապատասխան:

## 9. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ, ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

9.1. Հիմնադրամը պարտավոր է օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված ժամկետներում իր գտնվելու վայրում, պահպանել Հիմնադրամի՝

- պետական գրանցման վկայականը, կանոնադրությունը, կանոնադրության փոփոխությունները, լրացումներն ու նոր խմբագրությամբ հաստատված կանոնադրությունը, հիմնադրման մասին որոշումը,
- հաշվեկշռում արտացոլված գույքի նկատմամբ Հիմնադրամի իրավունքները հավաստող փաստաթղթերը,
- Հիմնադրամի մարմինների հաստատած ներքին փաստաթղթերը,
- առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների կանոնադրությունները,
- տարեկան հաշվետվությունները, հաշվապահական հաշվառման փաստաթղթերը, պետական կառավարման մարմիններին ներկայացվող ֆինանսական և վիճակագրական հաշվետվությունները,
- Խորհրդի նիստերի արձանագրությունները,
- կնքված պայմանագրերը,
- ֆինանսատնտեսական և այլ գործունեությանն առնչվող փաստաթղթերը:

9.2. Հիմնադրամը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վարում է հաշվապահական հաշվառում և ներկայացնում ֆինանսական ու վիճակագրական հաշվետվություններ:

9.3. Հիմնադրամի ֆինանսական միջոցները պետք է օգտագործվեն բացառապես Հիմնադրամի սույն կանոնադրությամբ սահմանված նպատակներին համապատասխան:

## 10. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ԼՈՒԾԱՐՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԳՈՒՅՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

10.1. Հիմնադրամը կարող է վերակազմակերպվել կամ լուծարվել Օրենքով սահմանված կարգով:

10.1.1. Հիմնադրամը կարող է վերակազմակերպվել միայն Հիմնադիրների միաձայն որոշմամբ:

10.1.2. Հիմնադրամի վերակազմակերպումը կարող է տեղի ունենալ Հիմնադրամի՝ այլ հիմնադրամին միացման կամ այլ հիմնադրամի հետ միաձուլման ձևով՝ Օրենքով սահմանված կարգով:

10.2. Հիմնադրամը կարող է լուծարվել, եթե՝

1) Հիմնադրամի գույքը բավարար չէ նրա գործունեության իրականացման համար, և անհրաժեշտ գույք ստանալու հնարավորությունն իրական չէ,
2) իր գործունեությամբ Հիմնադրամը շեղվել է կանոնադրությամբ նախատեսված նպատակներից,
3) հնարավոր չէ հասնել Հիմնադրամի նպատակներին և կատարել այդ նպատակների փոփոխություններ,
4) Հիմնադրամի գործունեությունը վտանգում է պետական և հասարակական անվտանգությունը, հասարակական կարգը, հանրության առողջությունն ու բարքերը, այլոց իրավունքները և ազատությունները,
5) Հիմնադրամը թույլ է տվել օրենքի բազմակի կամ կոպիտ խախտումներ կամ պարբերաբար իրականացրել է իր կանոնադրական նպատակներին հակասող գործունեություն,
6) Հիմնադրամն ստեղծելիս հիմնադիրը թույլ է տվել օրենքի էական խախտումներ, կեղծիքներ:

Հիմնադրամը կարող է լուծարվել նաև Օրենքով նախատեսված այլ դեպքերում:

10.2.1. Հիմնադրամը լուծարելու մասին որոշում կարող է ընդունել միայն դատարանը՝ շահագրգիռ անձանց դիմումով:

10.2.2. Դատարանի կողմից Հիմնադրամի լուծարման մասին որոշում ընդունելուց հետո Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը նշանակում է լուծարման հանձնաժողով և

Հ Քաղաքացիական օրենսգրքի ու Օրենքի համաձայն՝ սահմանում է լուծարման կարգը և ժամկետները:

Լուծարման հանձնաժողովի նշանակման պահից նրան են անցնում Հիմնադրամի գործերի կառավարման լիազորությունները: Լուծարվող Հիմնադրամի անունից դատարանում հանդես է գալիս լուծարման հանձնաժողովը:

Լուծարման գործընթացում գտնվելու մասին տեղեկությունները (լուծարման գործընթացի սկիզբը և ավարտը, լուծարման հանձնաժողովի կազմը) գրառվում են իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում՝ լուծարման հանձնաժողովի դիմումի հիման վրա:

4. Լուծարման հանձնաժողովն http://www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում հայտարարություն է զետեղում հիմնադրամի լուծարման և պարտատերերի պահանջների ներկայացման կարգի ու ժամկետի մասին: Այդ ժամկետը չի կարող պակաս լինել երկու ամսից՝ սկսած լուծարման մասին հրապարակման պահից, որը համարվում է հիմնադրամի լուծարման գործընթացի սկիզբ:

Լուծարման հանձնաժողովն իրականացնում է գույքի վերագնահատումը, միջոցներ է ձեռնարկում պարտատերերի հայտնաբերման և դեբիտորական պարտքերի ստացման ուղղությամբ, ինչպես նաև տեղեկացնում է պարտատերերին Հիմնադրամի լուծարման մասին:

10.2.5. Լուծարման ընթացքում Հիմնադրամը կարող է կնքել նոր գործարքներ և ստանձնել նոր պարտավորություններ՝ միան իր պարտավորությունները կատարելու համար անհրաժեշտ ընթացիկ գործունեությունն ավարտելու անհրաժեշտության դեպքում:

10.2.6. Պարտատերերի կողմից պահանջներ ներկայացնելու ժամկետն ավարտվելուց հետո լուծարման հանձնաժողովը կազմում է միջանկյալ լուծարման հաշվեկշիռ, որը տեղեկություններ է պարունակում լուծարվող Հիմնադրամի գույքի կազմի, պարտատերերի ներկայացրած պահանջների ցանկի, ինչպես նաև պահանջների քննարկման արդյունքների մասին:

10.2.7. Միջանկյալ լուծարման հաշվեկշիռը հաստատում է Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը: Այդ հաշվեկշռի հաստատվելուց հետո, եթե լուծարվող Հիմնադրամի ունեցած դրամական միջոցներն անբավարար են պարտատերերի պահանջները բավարարելու համար, լուծարման հանձնաժողովը, Օրենքով սահմանված կարգով, հրապարակային սակարկություններով իրականացում է Հիմնադրամի գույքի վաճառքը:

10.2.8. Պարտատերերի պահանջները բավարարելուց հետո, ինչպես նաև այն դեպքում, երբ լուծարման միջանկյալ հաշվեկշիռը հաստատելու պահին հիմնադրամը չունի պարտավորություններ պարտատերերի նկատմամբ, գույքն ուղղվում է հիմնադրամի կանոնադրությամբ նախատեսված նպատակներին, դրա անհնարինության դեպքում դրամական միջոցները փոխանցվում են պետական բյուջե, իսկ այլ գույքը սեփականության իրավունքով փոխանցվում է Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս Կառավարության, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

10.2.9. Հիմնադրամի գույքի ամբողջական բաշխումն իրականացնելուց հետո լուծարման հանձնաժողովը կազմում է լուծարման հաշվեկշիռ և ներկայացնում Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի հաստատմանը: Լուծարման հանձնաժողովը Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի հաստատած լուծարման հաշվեկշիռը ներկայացնում է դատարանի հաստատմանը:

10.2.10. Լուծարման հանձնաժողովը հաստատված լուծարման հաշվեկշիռն օրենքով սահմանված մյուս փաստաթղթերի հետ ներկայացնում է իրավաբանական անձանց պետական ռեգիստր՝ Հիմնադրամի լուծարման պետական գրանցում կատարելու համար: Հիմնադրամի լուծարումը համարվում է ավարտված, իսկ նրա գոյությունը դադարած՝ պետական գրանցման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻՑ ՔԱՂՎԱԾՔ առ 2023-11-06

# «ՖՐԻԴ ՍՈՂՈՅԱՆԻ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

## ՀԻՄՆԱԴՐԱՄ (ՀՄԴ)

| | |
|---|---|
| Գրանցման համար | **222.160.1350951** |
| Հիմնադրման տարի | **2023** |
| Գրանցման ամսաթիվ | **2023-11-06** |
| Գործունեության ժամկետ | **Անժամկետ** |
| Կարգավիճակ | **Իրավաբանական անձի լուծարման գործընթացում գտնվելու կամ գործունեության (գոյության) դադարման մասին պետական միասնական գրանցամատյանում տեղեկություններ գրառված չեն:** |
| Իրավաբանական անձի ծածկագիր (ՁԿԴ) | **54383731** |
| Հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ) | **05560871** |
| Սոցիալական վճարների պարտավորությունների անձնական հաշվի քարտի համար (Ապահովադրի ծածկագիր) | **0160951** |
| Էլ. փոստ | **manukyangohar7@yandex.ru** |
| Կայք | **-** |

**Գտնվելու վայրը**

| | |
|---|---|
| Հասցե | **Ս. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑ / 35 ԳՅՈՒՄՐԻ 3104 ԳՅՈՒՄՐԻ ՇԻՐԱԿ ՀԱՅԱՍՏԱՆ** |
| Հեռախոս | **(010)000000** |

**Գործադիր մարմնի ղեկավար**

| | |
|---|---|
| Պաշտոն | **Գործադիր տնօրեն** |
| Անուն Ազգանուն | **ԳՈՀԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ ՏԻԳՐԱՆԻ** |
| Անձնագրային տվյալներ | **012252557 2021-04-12 004** |
| Հասցե | **ՀՐ. ՔՈՉԱՐԻ Փ. / Շ / 16/6 / ԲՆ. 20 ԱՐԱԲԿԻՐ 0012 ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ** |